

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 03.02.2021թ. թիվ 2112230186 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերված գանգատն առանց բավարարման թողնելու մասին

<< 11 >> 02 2021թ. 7-13

1425

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Աղասի Մարգարյանի ՄԴ/10594-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Դուրյան փողոցի 14 տան բնակիչ Աղասի Մարգարյանը դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել 13.01.2021թ.-ին ժամը՝ 17:34-ին <<NISSAN>> մակնիշի 36VL149 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցով կատարված երթևեկության կանոնի խախտման համար կայացված Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 03.02.2021թ. թիվ 2112230186 որոշմանը՝ նշելով, որ «Կանգ-գիծ» գծանշումը հատել է լուսացույցի դեղին լույսի ներքո:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Աղասի Մարգարյանը ճանաչվել է որպես իրավախախտում կատարած անձ, ուստի նրա կողմից ներկայացված գանգատը ենթակա է քննության:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 03.02.2021թ. թիվ 2112230186 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը** (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին, իսկ նույն որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի, **լուսացույցի կարմիր ազդանշանն, այդ թվում նաև՝ թարթող, արգելում է երթևեկությունը**: Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ **հատվող երթևեկելի մասի առջև**՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ

կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար, ինչպես նաև այլ վայրերում՝ **լուսացույցի կամ կարգավորողի առջև**՝ խոչընդոտ չստեղծելով թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար: Նույն որոշման 19-րդ կետի համաձայն՝ դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոնների 18-րդ կետում նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանին չենթարկվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 03.02.2021թ. թիվ 2112230186 որոշման հիմքում դրված տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ արարքն արձանագրված խաչմերուկում առկա լուսացույցի վրա դիմումատուի կողմից <<Կանգ-գիծ>> գծանշումը հաստելու պահին միացված է եղել լուսացույցի դեղին արգելող ազդանշանը: Այսպես՝ տեսանյութի 17:34:52-րդ վայրկյանին միանում է լուսացույցի դեղին ազդանշանը, երբ դիմումատուի վարած տրանսպորտային միջոցը գտնվում էր <<Կանգ-գիծ>> գծանշման առջև: Դիմումատուի վարած տրանսպորտային միջոցը <<Կանգ-գիծ>> գծանշումը հատում է միայն տեսանյութի 17:34:54-րդ վայրկյանին, երբ դեռ շարունակում էր միացված մնալ **լուսացույցի դեղին արգելող ազդանշանը**:

Հարկ է նշել, որ փաստերի վերլուծության արդյունքում հերքվում է նաև դիմումատուի կողմից ՀՀ կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 19-րդ կետի պահանջների ռեժիմում արարք կատարելու հանգամանքը, քանի որ դիմումատուն <<Կանգ-գիծ>> գծանշումը հաստելուց առաջ գտնվել է դանդաղընթաց վիճակում, այսինքն՝ վերջինս հնարավորություն է ունեցել կանգնել առանց կտրուկ արգելակելու:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 03.02.2021թ. թիվ 2112230186 որոշման հիմքում դրված փաստական հանգամանքների դեմ բերած գանգատը թողնել առանց բավարարման:
2. Հանձնարարել ՏՄՀԻՎԳՔ բաժնին, Աղասի Մարգարյանի անվամբ կայացնել նոր վարչական ակտ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Աղասի Մարգարյանին և ՃՈ ՏՄՀԻՎԳՔ բաժնի:



[Signature]
Ե. Կարապետյան